«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ վերապատրաստող կազմակերպություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աշակերտի մոտիվացիայի բարձրացման ուղիները՝ կիրառելով խաղը որպես ուսուցման մեթոդ:

Հետազոտող ուսուցիչ՝ Էդգար Մանուկյան

Գյումրու թիվ 1 ավագ դպրոց, ինֆորմատիկա

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն 3
1. Ուսուցման կազմակերպման ձևերը «Ուսուցման կազմակերպման ձև» հասկացությունը և պատմական զարգացումը 4
2. Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգը 7
3. Դասը որպես դաս-դասարանային համակարգի հիմնական տարր դասին ներկայացվող հիմնական պահանջները 10
4. Դասի տիպերը և կառուցվածքը.....12
5. Ուսուցչի նախապատրաստվելը դասին 13
6. Խաղը, որպես ուսուցման մեթոդ.....13
Եզրակացություն.....15
Գրականության ցանկ 16

Ներածություն

Դիդակտիկայում ուսումնառության գործընթացի կազմակերպման ձևերը բացահայտվում են այն միջոցներով, որոնց շնորհիվ ուսուցիչը շփվում է աշակերտների հետ կրթական խնդիրների լուծման գործում: Դրանք լուծվում են գործունեության կառավարման, հաղորդակցական հարաբերությունների տարբեր եղանակներով: Վերջինիս շրջանակներում իրականացվում են կրթության, կրթական տեխնոլոգիաների, ոճերի, մեթոդների և դասավանդման գործիքների բովանդակությունը:

Ուսուցման գործընթացի կազմակերպման առաջատար ձևերն են դասը կամ դասախոսությունը (համապատասխանաբար՝ դպրոցում և համալսարանում):

Վերապատրաստման կազմակերպման նույն ձևը կարող է փոխել կառուցվածքը և փոփոխումը՝ կախված ուսումնական աշխատանքի առաջադրանքներից և մեթոդներից: Օրինակ՝ դաս-խաղ, դաս-գիտաժողով, երկխոսություն, սեմինար:

Դպրոցում դասընթացների հետ մեկտեղ գործում են կազմակերպչական այլ ձևեր (ըստ ցանկության, ուսումնական խմբի, լաբորատորիայի սեմինար, անկախ տնային առաջադրանքներ): Վերահսկողության որոշակի ձևեր կան՝ բանավոր և գրավոր քննություններ, վերահսկողություն կամ ինքնուրույն աշխատանք, թեստային առաջադրանքներ:

Դասի առանձնահատկությունները որոշվում են ուսուցման համակարգում նրա նպատակներով և ձևերով: Յուրաքանչյուր դաս յուրահատուկ տեղ ունի առարկայի համակարգում:

1. Ուսուցման կազմակերպման ձևերը «Ուսուցման կազմակերպման ձև» հասկացությունը և պատմական զարգացումը

Ուսուցման կազմակերպման ձևը ուսուցման գործընթացի արտաքին դրսևորումն է, որը բնութագրվում է մանկավարժի և սովորողի փոխհարաբերության բնույթով, ուսումնական աշխատանքի ընթացակարգերով, ուսումնական պարապմունքների բաշխման ժամանակով, կազմակերպման և տեղի առումով, սովորողների կազմով (խմբային, անհատական և այլն)։

Ուսուցման կազմակերպման ձևը կարող է հանդես գալ որպես կոնկրետ միջոցառում(դաս, լաբորատոր աշխատանք, գործնական աշխատանք, ինքնուրույն ուսումնական աշխատանք, էքսկուրսիա և այլն) կամ որպես ուսուցման կազմակերպման մի շարք ձևերի համակցություն՝ որպես համակարգ։

Հնագույն ժամանակներից հայտի է ուսուցման կազմակերպման անհատական ձևը, որի դեպքում մանկավարժը աշխատում է միայն մեկ սովորողի հետ, նրա անհատական տեմպով, պահանջներին համապատասխան և այլն։ Տարբեր սովորողների փոխհարաբերություն կամ փոխազդեցություն տվյալ դեպքում չի ենթադրվում։ Դեռևս հին հռոմեացի ականավոր մանկավարժ Մարկոս Ֆաբիուս Քվինթիլիանոսը իր «Հռետորի դաստիարակության մասին» գրքում բացահայտեց և հիմնավորեց դաս-դասարանային համակարգը, որը ուսուցման կազմակերպման մի շարք ձևերի տրամաբանական ամբողջականությունն էր և ելնում էր այդ ձևերի ֆունկցիոնալ կապի հաջորդականության ու նպատակասլացության սկզբունքից։

Միջնադարում այդ առաջավոր ձևը մոռացության մատնվեց. միջնադարը դրա կարիքը չուներ, այն խավարի դարաշրջան էր։ Արդեն տասնվեց և տասնյոթերորդ դարերում հասարակական կյանքի զարգացումը կրկին բացահայտեց ուսուցման կազմակերպման այն ձևը, որը կապահովեր մասսայական հիմնավոր և արդյունավետ կրթության իրականացումը։ Տասնյոթերորդ դարում չեխ ականավոր մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին նորից հայտնագործեց և խոր մանկավարժական հիմնավորում տվեց դաս- դասարանային համակարգին, որը լայնորեն տարածված է նաև ժամանակակից աշխարհում։ Հատկանշական է այն, որ տասնվեցերորդ դարում գտնվեց նաև

Քվինթիլիանոսի աշխատության ձեռագիրը (այն գտավ Վերածննդի դարաշրջանի բանաստեղծ Բետրարկան իտալական վանքերից մեկի արխիվներն ուսումնասիրելիս)։

Քվինթիլիանոսի աշխատությունը հաջորդ մեկ դարի ընթացքում Եվրոպայում ունեցավ ավելի քան հարյուր վերահրատարակություն, որը խոսում է այն օրինաչափության մասին, որ ուսուցման կազմակերպման ձևը հասարակական զարգացման հետևանք է, նրա պահանջի արձագանք։

Երբ կյանքը պահանջում է , մանկավարժական միտքը գտնում է խնդրի անհրաժեշտ լուծում։

Հետագայում Արևմտյան Եվրոպայում ստեղծվեցին ուսուցման կազմակերպման մի շարք այլ համակարգեր։ Դրանցից առավել հայտնի է Բելլ-լանկաստերյան համակարգը, որն ստեղծեցին անգլիացիներ ուսուցիչ Բելլը և հոգևորական Լանկաստերը (աշխատանքները կատարվեցին Հնդկաստանում)։ Այս համակարգը հենվում էր դաս-դասարանային համակարգի վրա։

Բելլ-լանկաստերյան համակարգը սովորողների փոխադարձ ուսուցման համակարգ էր։ Ուսուցիչը նախապես պարապում էր մի խումբ աշակերտների, բնականաբար, լավ սովորողների և աչքի ընկնողների հետ, որոնք անմիջապես անցնում էին Սովորողների այլ խմբերի իրենց արդեն սովորածը սովորեցնելուն։ Կազմված խմբերից յուրաքանչյուրում պարապում էր արդեն դասը սովորած աշակերտներից մեկը։ Ուսուցիչը ներկա էր պարապմունքներին և օգնում էր դժվարություններ ծագելու դեպքում։

Այս համակարգը թեև ապահովում էր առանց մեծ ծախսերի և դժվարությունների մեծ թվով աշակերտների գրագիտություն սովորեցնելը, սակայն հիմնավոր և խոր գիտելիքների հաղորդում ապահովել չէր կարող։ Խորհրդային ականավոր մանկավարժ Ն.Կ. Կրուպսկայայի բառերով ասած. «Մի տառ գիտեցողը սովորեցնում էր ոչինչ չիմացողին, երկու տառ իմացողը՝ մեկ տառ իմացողին և այլն»։ Հասարակական կյանքի զարգացումը նոր պահանջներ առաջադրեց կրթությանը, և այս համակարգից Արևմտյան Եվրոպայի երկրները տասնութերորդ դարում լիովին հրաժարվեցին։ Այդ համակարգը պահպանվեց Ռուսաստանում մինչև տասնիններորդ դարի վերջին զորանոցներում զինվորներին գրագիտություն սովորեցնելու համար։ Քսաներորդ դարում ստեղծվեցին

դաս-դասարանային համակարգի մի շարք մոդիֆիկացիաներ (ձևափոխություններ) Իենա-պլան, Բրայթոն-պլան և այլն, որոնք սակայն լայն տարածում չստացան։

Քսաներորդ դարի սկզբին ԱՄՆ-ի Դալտոն քաղաքում Ջոն Դյուիի պրագմատիստական ուսմունքի հիման վրա գիտափորձարարական ճանապարհով Ամերիկյան լուսավորչական գործչուհի Ելենա Պարկհերստի ղեկավարությամբ ստեղծվեց և լայնորեն ներդրվեց Դալտոն-պլան պլանը։

Դալտոն-պլանը սկզբունքայնորեն տարբերվում է դաս-դասարանային համակարգի Եթե երկրորդը ելնում է ուսուցչի ,մանկավարժի ղեկավար դերից ուսուցիչը կազմակերպում է սովորողի ամբողջ աշխատանքը և պատասխանատու է նրա արդյունքների համար, ապա Դալտոն-պլանում ուսուցիչը այդպիսի ֆունկցիա չի կրում, ուսուցիչը միայն խորհրդատու է, գիտելիքներ ստուգող ու գնահատող։

Դալտոն-պլանը ելնում է աշակերտների մտավոր օժտվածության գործակցի (IQ), սովորողներին դպրոց են ընդունում բավական խիստ թեստավորման միջոցով և խմբավորում են ըստ «ընդունակությունների» a,b,c երբեմն նույնիսկ d հոսքերում։ Այդ հոսքերից յուրաքանչյուրին առաջարկվում են «համապատասխան» դժվարության ծրագիրը։

Բնական է, որ թեթև ծրագրերով սովորողներին նրանց համար ստեղծվում է փակուղի, որը խոսում է այդ համակարգի ակնհայտ սոցիալական խտրականության ֆունկցիայի մասին։ Հատկապես որ ոչ մի թեզ (որն ընդունում են նաև ժամանակակից ամերիկյան մասնագետները) չի կարող բացահայտել երեխայի ընդունակությունների վերջնական բնութագիրը։

Սովորողը սովորաբար ազատ է ուսուցման առարկան, ձևը նաև տեղն ու ժամանակը ընտրելու հարցում։ Աշակերտը դժվարանալու դեպքում կարող է դիմել ուսուցչի օգնությանը։ Աշակերտները իրականացնում են զանազան հետազոտական նախագծեր, սովորում են փորձի և սխալների ճանապարհով։ Ժամանակակից պայմաններում համակարգչային ուսուցումը բացահայտում է նոր հնարավորություններ՝ բնականաբար ենթադրելով այդ հիմքի վրա ուսուցման կազմակերպման նոր ձևերի և համակարգերի ստեղծում։

2. Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգը

Ժամանակակից հանրակրթական դպրոցում ՀՀ-ում և Եվրոպայի ու Ասիայի բազմաթիվ երկրներում, այդ թվում ՌԴ-ում կիրառվում է ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգը, որի ելակետերը հետևյալներն են .

1. Միևնույն տարիքի և զարգացման գրեթե նույն մակարդակն ունեցող սովորողների մշտական կազմ, որը կոչվում է դասարան: Որոշ հեղինակներ զգուշացնում են չփոխվել «դասարան» հասկացությունը «դասասենյակ» հասկացության հետ:

2. Յուրաքանչյուր դասարան սովորում է իր համար ստեղծված ուսումնական պլանով, որի նվազագույն պահանջների կատարումը պարտադիր է յուրաքանչյուր սովորողի համար ուսուցման հաջորդ աստիճանին տեղափոխվելու համար:

3. Ուսումնական աշխատանքի հիմնական կազմակերպման ձևը դասն է, որը բովանդակային, կազմակերպչական որոշակի ամբողջության միավոր է, տրամաբանական և ֆունկցիոնալ առումով կապված է նախորդ և հաջորդ դասերի հետ, իրականացվում է հանրակրթական դպրոցում, նախապես որոշված ժամանակամիջոցում (դասացուցակ) :

4. Յուրաքանչյուր դաս կազմակերպվում է միայն մեկ առարկայից: Նույն դասին երկու կամ ավելի առարկաներ ուսուցանել չի թույլատրվում:

Դասն իրականցվում է ուսուցչի ուղղակի կառավարմամբ: Նա է առաջադրում թեման, նրա հանձնարարությունների կատարումը պարտադիր է: Ուսուցիչը պարտավոր է հետևողականորեն և անհրաժեշտ մակարդակով բացատրել, հաղորդել նյութը, կազմակերպել նյութի ընկալումը, իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և այլն: Ուսուցիչը կազմակերպում է աշակերտի ուսումնական գործունեությունը, այդ թվում աշակերտի ինքնուրույն ուսումնական աշխատանքը՝ ներառյալ տնային աշխատանքը:

Ուսուցման դաս-դասարանային համակարգում կիրառվում են ուսուցման կազմակերպման օժանդակ, լրացուցիչ ձևեր՝ գործնական և լաբորատոր պարապմունքներ, էքսկուրսիաներ, քննություններ, լրացուցիչ անհատական պարապմունքներ:

Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգի կարևորագույն

ֆունկցիան աշակերտի անձնային զարգացումն ու ձևավորումն է ։ Ուսուցման դաս-դասարանային համակարգը ունի մի շարք կարևոր առավելություններ ուսուցման կազմակերպման այլ ձևերի, հատկապես առավել տարածված Դալտոն- պլանի համեմատությամբ։

Դաս-դասարանային համակարգը առավել խորն է արտացոլում սովորողի մտավոր զարգացման և անձնավորության ձևավորման օրինաչափությունները։ Այն հնարավոր է դարձնում սովորողների զարգացման և ձևավորման բարձր տեմպը և մակարդակը, խթանում է սովորողի անձնավորության զարգացումը (զարգացնող և դաստիարակող ուսուցում)։ Համատեղ ուսումնական աշխատանքը կարևոր պայման է սովորողի արդյունավետ ուսումնական աշխատանքի համար։

Դաս-դասարանային համակարգը ելնում է սովորողների տարիքային զարգացման օրինաչափ ընթացքից։

Սակայն, այս ամենի հետ միասին, դաս-դասարանային համակարգն ունի մի շարք օբյեկտիվ դժվարություններ։ Այս համակարգում սահմանափակված են սովորողի անհատական առանձնահատկությունների ,զարգացման անհատական տեմպի հաշվառման հնարավորությունները։ Դաս-դասարանային համակարգի օբյեկտիվ տրամաբանությունը ստիպում է ուսուցչի (ինչքան էլ նա ձգտի հաշվի առնել սովորողի անհատականությունը) ղեկավարվել ինչ-որ անորոշ (միջին աշակերտի) մակարդակով, որը իրական չէ ՝ համապատասխանում է քիչ թվով իրական աշակերտների մակարդակին, և ստացվում է, որ դասարանի աշակերտների մեծ մասի անհատական առանձնահատկությունները հաշվի չեն առնվում։ Թույլերի համար առաջարկվող տեմպը բարձր է, իսկ առավել ընդունակների համար հեշտ է, որով նվազում է նրա զարգացնող ֆունկցիան։

Սակայն, դիդակտիկայում հիմնավորում է այն կարծիքը, որ դաս-դասարանային համակարգի թերությունները կարելի է նվազեցնել և վերացնել բացահայտելով դասի արդյունավետությունը բարձրացնելու նոր, լայն հնարավորություններ։

Ուսուցման դաս-դասարանային համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններից են այլ համակարգերի, հատկապես անհատական մոտեցումն

ապահովող համակարգչային և պրոբլեմային ուսուցման տարրերով հագեցնելը, ուսուցման տեխնիկական միջոցների կիրառումը, դասասենյակի, ուսումնական կաբինետների, լաբորատորիաների նպատակասլաց կահավորումը, ուսումնանյութական բազայի կատարելության և հագեցվածության ապահովումը:

Երկրորդ ուղին ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացումն է, որն առաջին հերթին ենթադրում է ուսուցչի գիտամանկավարժական բարձր պատրաստվածության ապահովում, նրա վարպետության բարձր մակարդակ, առաջավոր փորձի ընդհանրացում ու կիրառում և վերջապես ուսուցիչների սոցիալական, բարոյական, իրավական պաշտպանություն: Ուսուցիչը չի կարող իր ֆունկցիաները կատարյալ իրականացնել, եթե ճնշված է և անապահով, և եթե նրա աշխատանքը հասարակությունն ու պետությունն հատուկ միջոցներով չեն գնահատում ու խրախուսում:

3. Դասը որպես դաս-դասարանային համակարգի հիմնական տարր դասին ներկայացվող հիմնական պահանջները

Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգի կենտրոնական, որոշիչ տարրը դասն է: Հանրակրթական դպրոցներում որտեղ դաս-դասարանային համակարգը կիրառվում է առավել լրիվությամբ, աշակերտները գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհամեմատ մեծ մասը ձեռք են բերում դասի ժամանակ: Դասն է հիմնականում իրականացնում սովորողների մտավոր զարգացման, դաստիարակության և ձևավորման ֆունկցիաները: Հանրակրթական դպրոցի սովորողը մինչև դպրոցն ավարտելը անցնում է ավելի քան տասը հազար դասերի միջոցով:

Դասի կազմակերպումը բարդ գործընթաց է: Դասին նախապատրաստվելը և մասնակցելը աշակերտից պահանջում է մտավոր, ֆիզիկական և բարոյական մեծ ջանքերի ներդրում:

Դասը որոշում է աշակերտի առօրյան, նրա հոգեբանական վիճակն ու տրամադրությունը: Դասի կազմակերպումը պետք է դիտել որպես պետական, մանկավարժական կարևորագույն միջոցառում: Միայն այս դեպքում կարող է ապահովել աճող սերնդի ճիշտ և նպատակասլաց զարգացումը:

Դասը ուսուցման գործընթացի բովանդակային, կազմակերպման ժամանակային ավարտուն հատված է: Դասին ներկայացվում են հետևյալ հիմնական դիդակտիկական պահանջները.

- դաստիարակչական և դիդակտիկական նպատակների միասնությունը,
- դասի բովանդակության գիտականությունը և նպատակաուղղվածությունը, աճող սերնդի համակողմանի և ներդաշնակ զարգացումը, դասի հստակ պլանավորումը և նախապատրաստումը,
- դասի համար անհրաժեշտ բոլոր ուսումնաօժանդակ պայմանների առկայությունը,
- դասին բոլոր դիդակտիկական սկզբունքների առավել նպատակահարմար, համակողմանի և արդյունավետ կիրառումը,
- աշակերտների կողմից դասին հոգեբանորեն, բարոյապես և ֆիզիկապես

պատրաստ լինելը,

- ուսուցման խնդիրների պարզ գիտակցումը աշակերտների կողմից և այդ խնդիրների իրականացմանը նպատակաուղղված լինելը (ուսուցչի հետ համագործակցության պատրաստակամություն),
- ուսուցչի աշակերտների համագործակցության բարձր մակարդակը, հետադարձ կապի ապահովումը,
- կապը հին և նոր դասերի միջև, կապը սովորողի անձնական փորձի հետ,
- սովորողի գործունեության բոլոր ոլորտների դրական մոտիվացիան, ուսումնական մոտիվների ձևավորումը,
- դասին սովորողների գործնական աշխատանքի կարողությունների և հմտությունների ձևավորումը, նրանց ինքնուրույն ուսումնական աշխատանքի համար
- նախապատրաստելը,
- ուսուցման միջոցների (դիդակտիկական պարագաներ, տեխնիկական միջոցներ և այլն) արդյունավետ և լավագույն (օպտիմալ) կիրառումը
- ուսուցման գործընթացի ճիշտ դիագնոստիկան և հետագա առաջընթացի ուղիների և մեթոդների գիտական կանխատեսումը և պլանավորումը,
- դասի ինքնավարությունը, ուսուցչի փորձի կազմակերպումը և ներդրումը։

4. Դասի տիպերը և կառուցվածքը

Դասերն ըստ դիդակտիկական ֆունկցիայի լինում են տարբեր տիպի։ Դիդակտիկայում առանձնացվում են դասերի երկու խմբեր.

1. Մասնագիտացված դասեր, որոնք կատարում են հիմնականում մեկ դիդակտիկական ֆունկցիա,

Ա) նոր գիտելիքների հաղորդման դաս,

Բ) գիտելիքների, կարողությունների և հմտությունների կրկնության և ամրապնդման դաս,

2. Գ) գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման և գնահատման դասեր, Դ) ընդհանրացնող դասեր։

3. Խառը տիպի դասեր ,որոնցում սովորաբար զուգակցվում են այս բոլոր ֆունկցիաները. միևնույն դասին իրականացվում է և հին դասի հարցում, և նոր դասի հաղորդում, կրկնություն, ամրապնդում, ընդհանրացում և այլն։

Դասի տիպը որոշելիս ուսուցիչը ելնում է նյութի յուրահատկություններից, աշակերտների տարիքային առանձնահատկություններից, ուսուցման գործընթացի տրամաբանությունը որոշող մյուս գործոններից։

Յուրաքանչյուր տիպի դաս ունի յուրահատուկ կառուցվածք։ Ուսուցիչը դասի կառուցվածքը որոշելիս ելնում է իր կոնկրետ նպատակներից՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում։

Սակայն բոլոր տիպի դասերին բնորոշ են հետևյալ կառուցվածքային տարրերը.

Ա) դասի սկիզբ կամ կազմակերպական մաս.

Բ) դասին սովորողների ներգրավում և թեմայի ճանաչողական խնդրի առաջադրում.

Գ) դասի հիմնական մաս՝ հին նյութի հարցում, կրկնություն, նոր դասի հաղորդում և այլն (կամ բոլորը միասին խառը տիպի դասի ընթացքում).

Դ) դասի ավարտ, որը հատուկ մանկավարժական պահ է, և չի կարելի նույնացնել հարցերի սպառման կամ տնային աշխատանքների հանձնարարման հետ։

5. Ուսուցչի նախապատրաստվելը դասին

Դասը բարդ ստեղծագործական աշխատանք է: Դասի գիտական կազմակերպումը պահանջում է ուսուցչից մանրակրկիտ նախապատրաստություն, որը ենթադրում է հետևյալ աշխատանքները.

Ա) ուսուցչի մանկավարժական, հոգեբանական, առարկայական և մեթոդական գիտելիքների անընդհատ խորացում, որի նպատակն է ուսուցչի աշխատանքը կապել մանկավարժական գիտության և փորձի նվաճումների փոփոխվող հասարակական պահանջների հետ

Բ) տվյալ դասի պլանի կազմում ։

6. Խաղը, որպես ուսուցման մեթոդ

Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է երեխաներին: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի, այլ պարզապես խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով: Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Երեխաներին հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները:

Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն և ուշադիր: Խաղերը հաճախ տեղեկատվական բնույթ են կրում: Խաղի ընթացքում երեխան կարողանում է ազատ մտածել տվյալ հարցի շուրջ: Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ: Ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու: Արդյունքում երեխան ինքնավստահություն է ձեռք բերում և զարգացնում զննողականությունը ։

Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում նպատակ ունեմ խաղի անցկացման արդյունքում պարզել ուշադրության, մտածողության, արագ կողմնորոշման

կարողության մակարդակը 2-րդ դասարանի երեխաների մոտ, այնուհետև ստացված տվյալների հիման վրա՝ պարզելով թույլ օղակները, տանել համապատասխան աշխատանք, որի ելքային արդյունքը կլինի դասարանի առավել շատ երեխաների մոտ նշված կարողունակության զարգացումը:

Հետազոտությունը անցկացրել եմ 2-րդ դասարանում, որտեղ սովորում են 20 աշակերտ: Խաղի միջոցով առավել մատչելի է դառնում ուսուցումը:

Խաղի անվանումն է «Գնացք»:

Ուսուցանել եմ առարկա և գործողություն ցույց տվող բառերը «Գնացք» խաղի միջոցով: Դասարանը բաժանվել է 2 խմբի: Դասից ընտրել են առարկա և գործողություն ցույց տվող բառեր և միացել իրենց շոգեքարշին (1-ին առարկա,2-րդ գործողություն): Երբ սխալ էին միանում գնացքը քանդվում էր և չէր կարողանում հասնել կայարան:



Խաղի արդյունքները՝ ըստ օրերի.

Եզրակացություն

Դասը բարդ ստեղծագործական աշխատանք է։ Դասի գիտական կազմակերպումը պահանջում է ուսուցչից մանրակրկիտ նախապատրաստություն, որը ենթադրում է հետևյալ աշխատանքները։

Դասը սովորողների կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասաժամի մեծ մասը։ Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ, ինչպիսիք են խաղը, բացատրությունները, առանձին հարցերի շուրջ զրույցները, քննարկումները, ինքնուրույն աշխատանքները և այլն։ Ուսուցիչը նախքան նյութի հաղորդումը պետք է ակտիվացնի սովորողների ուշադրությունը, մտավոր գործունեությունը, կազմակերպի ու համակարգի ստացվող գիտելիքները։

Դասի հիմնական նպատակն աշակերտների պատրաստվածության գնահատելն ու շտկումներ կատարելն է։ Դասերը սովորաբար կազմակերպվում են ստուգողական գրավոր աշխատանքների, շարադրությունների և փոխադրությունների տեսքով։

Գրականության ցանկ

1. Բաբայան Գ. Աշխատանքային դաստիարակության կազմակերպումը արտադրական ուսուցման պրոցեսում, Երևան, 1987

2. Մանկավարժություն. մանկավարժական տեսություններ, համակարգեր, տեխնոլոգիաներ. դասագիրք / խմբ. S. A. Սմիրնովա. 2-րդ հրատ. Մ. : Ակադեմիա,1999թ.

3. Դյաչենկո Վ. Կ. Նոր դիդակտիկա Մ. : Հանրային կրթություն, 2001թ.